**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3**

**«ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-1/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԵՐԿԱՐԱՁԳՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ(ԾՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ԲԱՑՈՂ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ**

03.03.2017թ.

ժամը $10^{00}$

**Բացողներ՝**

ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՀ վարչության տեխնիկական բաժնի սպա, մայոր Ա. Մակարյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ֆինանսական վարչության ֆինանսական հոսքերի բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Սալայան:

**Օրակարգը՝**

1. «ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-1/2» ծածկագրով ԾՀ ընթացակարգին **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքում ներկայացված հայտերը:

Սահմանված ժամկետում **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքում բեռնվել են ներքոհիշյալ մասնակիցների հայտերը, որոնք սահմանված կարգով հաստատվել են և ներկայացվել են գնահատման հաջորդ փուլ.

- Սահմանված կարգով ներկայացված մասնակիցների հայտեր, որոնք ընդունվել են **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքի կողմից և համարվել են հետագա գնահատման համար ընդունելի .

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «Էլիպս գրուպ» ՍՊԸ |
| 2 | «Երվադա» ՍՊԸ |
| 3 | «Սեգմենտ» ՓԲԸ |
| 4 | «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ |
| 5 | «Էրոդավ» ՍՊԸ |
| 6 | «Էլչ Գրուպ» ՍՊԸ |
| 7 | «ՖՈՏՈՆ» ՍՊԸ |
| 8 | «ՏԻՍԱ» ՓԲԸ |
| 9 | «ՄԱԺԷՎ» ՍՊԸ |

**Բացող** Ա. Մակարյան

**Բացող** Ս. Սալայան

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**«ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/7 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-1/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԾՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

03.03.2017թ.

ժամը 10[00]

**Գնահատողներ՝**

Մասնակցում էին՝ **հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության պետի ՊԺԿ, գնդապետ Տ. Մաթևոսյան,

**Գնահատողներ՝** ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Խ. Երիցյան,

ՀՀ ՊՆ ՌՈ ՀՕԾ բաժնի ավագ սպա, կապիտան Հ. Բարսեղյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, հետախուզական և քիմիական միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Տ. Գասպարյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան:

**Գնումների համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության Ս և ռազմական տեխնիկայի բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Ամիրյան:

***«ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/7 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-1/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

---

(Ա.Ամիրյան)

1. Տեղեկություններ հայտ /գնային առաջարկ/ ներկայացրած մասնակիցների մասին.

2.«ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-1/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հարցում պարունակող էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հարցման պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

4 Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-1/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ <u>www.armeps.am</u> կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

---

(Ա.Ամիրյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-1/2» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «Էլիպս գրուպ» ՍՊԸ |
| 2 | «Երվադա» ՍՊԸ |
| 3 | «Սեգմենտ» ՓԲԸ |
| 4 | «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊԸ |
| 5 | «Էրոդավ» ՍՊԸ |
| 6 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ |
| 7 | «ՖՈՏՈՆ» ՍՊԸ |
| 8 | «ՏԻՍԱ» ՓԲԸ |
| 9 | «ՄԱԺԷՎ» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5 դեմ՝ 0:*

**2 . «ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-1/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

---

(Ա.Ամիրյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով /հարցումով/ պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերը առկա են, բացի «Էրոդավ» ՍՊԸ-ից: «Էրոդավ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտին որևէ փաստաթուղթ կցված չէ, գնահատող հանձնաժողովը Մասնակցի հայտը գնահատելու հնարավորություն չունի:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

# ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7– ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/2 ծածկագրով ընթացակարգի գների ամփոփում

| Չ/Հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Քանակ | Նախ. Ընդհանուր գին/գում/ | «Էլիտա գրուպ» ՍՊԸ | «Էլիտա գրուպ» ՍՊԸ | «Երկաթա» ՍՊԸ | «Երկաթա» ՍՊԸ | «Սեգմենտ» ՓԲԸ | «Սեգմենտ» ՓԲԸ | «ՌԱՖ-ՕՖԻՍ» ՍՊԸ | «ՌԱՖ-ՕՖԻՍ» ՍՊԸ | «ՖՈՏՈՆ» ՍՊԸ | «ՖՈՏՈՆ» ՍՊԸ | ՏԻՄԱ ՓԲԸ | ՏԻՄԱ ՓԲԸ | «Էյ Գրուպ» ՍՊԸ | «Էյ Գրուպ» ՍՊԸ | «ՄԱԺԵՆ» ՍՊԸ | «ՄԱԺԵՆ» ՍՊԸ | 1-ին տեղ զբաղեցնող մասնակից |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | գինը ԱԱՀ-ով | գինը առանց ԱԱՀ | գինը ԱԱՀ-ով | գինը առանց ԱԱՀ | գինը ԱԱՀ-ով | գինը առանց ԱԱՀ | գինը ԱԱՀ-ով | գինը առանց ԱԱՀ | գինը ԱԱՀ-ով | գինը առանց ԱԱՀ | գինը ԱԱՀ-ով | գինը առանց ԱԱՀ | գինը ԱԱՀ-ով | գինը առանց ԱԱՀ | գինը ԱԱՀ-ով | գինը առանց ԱԱՀ | |
| 1 | Աքցաններ (Կծաքցան) | հատ | 80 | 80 000 | | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | Տարատեսակ ձևերի գործիքներ (Հավաքածու) | հատ | 80 | 88 000 | | | | | | | | | | | | | | | | | |
| 3 | Պտուտակահաններ | հատ | 80 | 104 000 | | | | | | | | | | | | | | | | | |
| 4 | Հաղորդալարված մալուխներ հատուկ կիրառման համար (Մակնիշ Պ-296) | մետր | 100000 | 30 000 000 | 12,000,000 | 10,000,000 | | | | | 27,600,000 | 23,000,000 | | | 68,400,000 | 57,000,000 | 31,200,000 | 26,000,000 | 69,600,000 | 58,000,000 | «Էլիտա գրուպ» ՍՊԸ |
| 5 | Հաղորդալարված մալուխներ հատուկ կիրառման համար (Մակնիշ Պ-274) | մետր | 100000 | 5 400 000 | | | 6,300,000 | 5,250,000 | | | 6,900,000 | 5,750,000 | 5,880,000 | 4,900,000 | | | 6,000,000 | 5,000,000 | 5,292,000 | 4,410,000 | «ՄԱԺԵՆ» |
| 6 | Էկրանացված մալուխներ (Մակնիշ ՏՊՊէՊ 10*2*0.5) | մետր | 3000 | 1 260 000 | 1,380,000 | 1,150,000 | 1,260,000 | 1,050,000 | | | | | 1,062,000 | 885,000 | | | Սխալ գնային առաջարկ | | 1,440,000 | 1,200,000 | «ՖՈՏՈՆ» ՍՊԸ |
| 7 | Էկրանացված մալուխներ (Մակնիշ ՏՊՊէՊ 20*2*0.5) | մետր | 2000 | 1 200 000 | 1,760,000 | 1,466,666.67 | 1,392,000 | 1,160,000 | | | | | 1,272,000 | 1,060,000 | | | 1,800,000 | 1,500,000 | 1,440,000 | 1,200,000 | բանակցություն |
| 8 | Էկրանացված մալուխներ (Մակնիշ ՏՊՊէՊ 30*2*0.5) | մետր | 2000 | 1 600 000 | 2,100,000 | 1,750,000 | 1,980,000 | 1,650,000 | | | | | 1,636,000 | 1,530,000 | | | 2,400,000 | 2,000,000 | 1,968,000 | 1,640,000 | բանակցություն |
| 9 | Էկրանացված մալուխներ (Մակնիշ ՏՊՊէՊ 50*2*0.5) | մետր | 1000 | 1 800 000 | 1,600,000 | 1,333,333.33 | 1,572,000 | 1,310,000 | | | | | 1,484,000 | 1,236,666.67 | | | 2,100,000 | 1,750,000 | 1,800,000 | 1,500,000 | բանակցություն |
| 10 | ցանցային մալուխներ (Մակնիշ CAT 5e F/UTP) | մետր | 10000 | 1 000 000 | 2,300,000 | 1,916,666.67 | 2,400,000 | 2,000,000 | | | | | | | | | 1,080,000 | 900,000 | 1,500,000 | 1,250,000 | բանակցություն |
| 11 | հաղորդալարված մալուխներ հատուկ կիրառման համար (Մակնիշ ՊԿ-50) | մետր | 2400 | 2 952 000 | | | | | 2,880,000 | 2,400,000 | 2,757,600 | 2,298,000 | | | | | | | 1,958,400 | 1,632,000 | «ՄԱԺԵՆ» |
| 12 | հաղորդալարված մալուխներ հատուկ կիրառման համար (Մակնիշ ՔՊՎԼ) | մետր | 2000 | 300 000 | | | | | | | | | | | | | 300,000 | 250,000 | 720,000 | 600,000 | «Էյ Գրուպ» ՍՊԸ |

Գնահատողներ (ԳԱՊ)

Տ. Մաթևոսյան

Ռ. Երիցյան

Հ. Բաբայան

Ա. Մաղաքյան

Տ. Գասպարյան

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

---

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 8 մասնակից. Տես սույն արձանագրությանը կից հավելված №1

«Էլիպս գրուպ» ՍՊԸ-ն (4-րդ, 10-րդ չափ.), «Երվանդա» ՍՊԸ-ն (5-ից 10-րդ չափ.), «Սեգմենտ» ՓԲԸ-ն (11-րդ չափ.), «ՌԱՖ-ՕՁԱԽ» ՍՊԸ-ն (4-րդ, 5-րդ 11-րդ չափ.), «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն (6-ից 9-րդ և 12-րդ չափ.), «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ն (5-ից 9-րդ չափ.), «ՏԻՍԱ» ՓԲԸ-ն (4-րդ չափ.), «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն (5-ից 12-րդ չափ.) հայտարարել և հավաստել են, որ հայտով իրենց կողմից վերը նշված չափաբաժիններում ընդգրկված ապրանքները հանդիսանում են ԵՏՄ արտադրության ապրանքներ:

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/, բացի «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 6-րդ չափաբաժնից: Մասնակցի ներկայացրած Ինքնարժեք, Շահույթ ԱԱՀ բաղադրիչներից բաղկացած գումարը չի համապատասխանում ներկայացված ընդհանուր գնին: Ուստի Մասնակցի հայտը այդ չափաբաժնի մասով մերժվել է:

3.3 Քանի որ ընթացակարգի 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով մասնակիցների առաջարկած նվազագույն գները բարձր են վերը նշված ծածկագրով ընթացակարգի նախահաշվային գներից, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի պահանջները, բավարար գնահատված բոլոր մասնակիցները ծանուցվեցին 13.03.2017թ. ժամը 15:00-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կայանալիք բանակցությունների վերաբերյալ: Բանակցություններին մասնակցելու համար ներկայացավ «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը: Մասնակցի հետ գների նվազեցման նպատակով գնահատող հանձնաժողովի կողմից վարվեց միաժամանակյա բանակցություններ: 7-րդ չափաբաժնի համար «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ն առաջարկեց՝ առանց ԱԱՀ՝ 998333.31 ՀՀ դրամ և ԱԱՀ-ով՝ 1198000 ՀՀ դրամ: 8-րդ, 9-րդ չափաբաժինների մասով Մասնակիցը նախկինում ներկայացրած գները թողեց անփոփոխ: Արդյունքում ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

---

(Ա.Ամիրյան)

4.1 17.03.2017թ. «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեցին «Էլիպս գրուպ» ՍՊԸ-ն (4-րդ չափ.) «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն (5-րդ և 11-րդ չափ.) «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ն (6-րդ, 7-րդ չափ.), «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն (12-րդ չափ.):

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին և հաջորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

4.4 Հանձնաժողովը որոշեց մերժել մասնակիցների առաջարկները այն չափաբաժիններում, որտեղ այդ առաջարկները գերազանցում են ապրանքների նախահաշվային գները (8, 9, 10 չափաբաժիններ) և այդ

չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարել չկայացած: Ընթացակարգը հայտարարվեց չկայացած նաև այն չափաբաժինների մասով, որտեղ մասնակիցների կողմից առաջարկ ընդհանրապես ներկայացված չէր (1, 2, 3 չափաբաժիններ):

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

(Ա.Ամիրյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել .

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Ա.Ամիրյան)

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/2» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված՝ սույն ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:*

**Գնահատող (ԳԱՊ)** Տ. Մաթևոսյան

**Գնահատողներ՝** Խ. Երիցյան

Հ. Բարսեղյան

Տ. Գասպարյան

Ա. Մաղաքյան

**Գնումների համակարգող՝** Ա. Ամիրյան